Լրացուցիչ համաձայնագիր N 3

08.01.2014թ. կնքված N CPS-08-01-14 Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի

Ք.Երևան «17» սեպտեմբերի 2014թ.

ՀՀ Ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու» մի կողմից, և

«Հայփոստ» ՓԲԸ, ի դեմս գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հ. Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և «Հայփոստ» ՓԲԸ դիտորդ խորհրդի 03.06.2011թ-ի որոշման հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից,

ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Սույն համաձայնագրով կողմերը համաձայնության են գալիս՝ 08.01.2014թ. կնքված N CPS-08-01-14 Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում (այսուհետ նաև Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)Պայմանագրի 3.1 կետի 1-ին մասը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն պայմանագրի 1.2 կետով և Հավելված 1-ով նախատեսված DM ծառայությունների համար Պատվիրատուն Կատարողին վճարում է յուրաքանչյուր առաքանու համար՝ **350 /երեք հարյուր հիսուն/** ՀՀ դրամ այդ թվում ԱԱՀ-ն, իսկ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **300,000,000 /երեք հարյուր միլիոն/** ՀՀ դրամ այդ թվում ԱԱՀ-ն»:

2)Պայմանագրի Հավելված 2-ի աղյուսակը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ծառայության տեսակը
Ավտոմատացված ծալում
Ավտոմատացված ծրարավորում C65 ձևաչափի ծրարով
Թղթի ներդրում ծրարների մեջ, դրանց կնքում, ինչպես նաև հնարավոր է մի քանի թերթերի ծալում և ներդում
Հետադարձ հասցեի տպագրում
Առաքանու վրա ուղարկող ընկերության հասցեի տպագրում ծրարի վերևի ձախ անկյունում
Ծանուցագիր CN 07 պատվիրված / ներառյալ լրացումը
Ուղարկողը ստանում է առաքանու առաքումը հավաստող գրավոր հաստատում /առաքվել է , ետ է ուղարկվում/
C65/114*229/ Ծրար հասցեատիրոջ հասցեի համար նախատեսված պատուհանով
Առաքում / մինչև 20 գր.

Առաքանու "Պատվիրված" ձևակերպում
Յուրաքանչյուր օրվա ընթացքում առցանց մուտքագրված CN 07 ծանուցագրերի փաստաթղթային տարբերակների հերթական դասավորված կարգով օրեկան հանձնումը ճանապարհային ոստիկանությանը և ճանապարհային ոստիկանության կողմից առաքման ենթակա նյութերը Ծովակալ Իսակով 9 հասցեից ընդունումը:

2. Վերը նշված պայմանագրի մնացած բոլոր դրույթները, որոնք նախատեսված չեն սույն լրացուցիչ համաձայնագրով մնում են անփոփոխ:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն Համաձայնագրի 1 կետի 1-ին պարբերությամբ նախատեսված փոփոխությունը կողմերի համաձայնությամբ կիրառվում է 25.05.2014թ-ից:
5. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 08.01.2014թ. կնքված N CPS-08-01-14 Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
6. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն ք. Երևան, Նալբանդյան 130 ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900013150041 ՀՎՀՀ 01840082	<<Հայփոստ>> ՓԲԸ ք. Երևան, Սարյան 22 ՝՝Կոնվերս բանկ՝՝ ՓԲԸ Հ/Հ 19300037031508000 ՀՎՀՀ 02507464
_____ Ա. [illegible] /ՀՀ ոստիկանության պետի [illegible]/ Կ.Տ.	_____ Հ. Ավագյան /Հայփոստ ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ՝ գործառնական գծով/

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԱՌԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ոստիկանությունը, որը գտնվում է Նալբանդյան 130 հասցեում, ստորև ներկայացնում է N CPS-08-01-14 ծածկագրով 2014թ-ի հունվարի 8-ին կնքված պայմանագրում 2014թ. սեպտեմբերի 17-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի սակագնի և տեխնիկական բնութագրի փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կնքվել է համաձայնագիր՝ պայմանագրի սակագնի և տեխնիկական բնութագրի վերաբերյալ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Անի Նազարյանին:

Հեռախոս՝ 010 59 68 57:

Էլ. փոստ՝ police-gnumner@rambler.ru:

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն